

Գազացիներ, Ասխաղունացիներ, Մայումցիներ, Տխուրացիներ, Անկիո-  
 ֆացիներ, Դաւաակացիներ, Եգիպտացիներ, Կապարովկիացիներ, Ել-  
 շաղացիներ, **Ինչպէս նաև մեկ Թեսաղոնիկցի, մեկ Հնդկ, մեկ Սա-  
 րակիմու եւ մեկ Արեթուացի:**

#### 4. Քողիբայի վանքին հայ միաբանները .

Վերև գրեցինք որ Քողիբայի վանքը Քողիբացի Յովհաննէ-  
 սի օրով ( \* 532) տակաւին խուցերէ բաղկացեալ հաստատու-  
 թիւն մըն էր, է. դարուն էր որ հոն կը շինուի վանք ու եկեղե-  
 ցի, կը ծաղկին նշանաւոր վանականներ՝ Քողիբացին Գէորգ  
 ( \* 625) և Անտոն, որ գրած է առաջնոյն վարքը: Քողիբան՝ է.  
 դարուն իր պայծառութեան զէնիթին վրայ կը գտնուէր, յետոյ  
 տակաւ առ տակաւ անշքացաւ ու մինչև ժ.բ. դար թէև գոյու-  
 թիւն ունէր, սակայն նոյն ժամանակէն սկսեալ քայքայուեցաւ  
 և վերջին տարիներուն միայն նորոգուեցաւ: Վանքին պատմա-  
 կան գերեզմանատան մէջ ամփոփուած ննջեցելոց արձանազըր-  
 ուած անուններէն կը հետեցնենք վանքին զարգացման թուա-  
 կանը, որ ժամանակ հաւաքուած էին բազմաթիւ երկիրներէ ու  
 ազգութիւններէ վանականներ, որոնք թէև ապաստանած օտար  
 հաստատութեան մը հովանիին տակ, բայց կը պահէին իրենց  
 կրօնական դաւանութիւնը: Վերոյիշեալ հեղինակին այն կարծիքը  
 թէ անոնք յունագաւանութիւնը ընդունած էին ու այդ հանգա-  
 մանքով միայն կը մնային Քողիբայի մէջ, ուղիղ չենք գտներ  
 այն փաստերով որ իրեն ալ անտարակոյս անծանօթ չեն: Սյունի  
 մէջ և այլուր մեր հրատարակած յօդուածներով ըստ բաւականի  
 պատմականօրէն հասկցուցինք թէ Հայոց Եկեղեցին Երուսաղէմի  
 և չրջակայից օտար վանքերու մէջ ի հնուսն ունեցած է հայ  
 միաբաններ, որոնք իրենց դաւանութեամբն ապրած են, իրենց  
 լեզուովն աղօթած ու սաղմոսած են ուրոյն եկեղեցիի մը մէջ,  
 թոյլտուութեամբ օտար վանքերու առաջնորդներուն: Այս մա-  
 սին ամենէն հին վկայութիւնը կու տայ Յերոնիմոս: Ընթերցողը  
 երբ կը կարգայ Սյունի անցեալ տարուան էջերուն մէջ մեր յօդ-  
 օւածներով պարզուած և գրքիս մէջ ամփոփուած պատմական  
 փաստերը, պիտի տեսնէ որ Գաթիզուայի (Սյուն, 1927, էջ 109-